Արատտա

- Հայաստանի Մ.թ.ա. III-II հազարամյակների պատմության լուսաբանման համար անգնահատելի տեղեկություններ են հաղորդում Միջագետքի հնագույն՝ շումերական և աքքադական գրավոր հուշարձանները: Շումերները՝ աշխարհի առաջին քաղաքակրթություններից մեկի ստեղծողները, մինչև Հարավային Միջագետքը յուրացնելը բնակվել են Միջագետքի հյուսիսային և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում: Հեռանալով այնտեղից՝ նրանք երկար ժամանակ պահպանել են կապը լեռնաշխարհի հետ: Այդ իսկ պատճառով մեր լեռնաշխարհի մասին ամենավաղ հիշատակությունները գտնում ենք շումերական գրավոր հուշարձաններում:
- Արատտան Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին վաղ պետական կազմավորումն է: Նրա մասին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. XXVIII-XXVII դարերին:
- Արատտայի մասին տվյալները մեզ հասել են Էնմերքար ու Լուգալբանդա իշխանների մասին վիպերգերից ինչպես նաև Գիլգամեշին նվիրված դյուցազնավեպից: Սեպագիր բնագրերը թվագրվում են 20-18 դարեր մ. թ. ա. : Հավանաբար Արատտա երկիրը գոյություն է ունեցել ամենավաղը 27-րդ դարում մ. թ. ա. : Իսկ նրա տեղի հարցում պատմաբանները մինչ օրս չունեն միասնական կարծիք, սակայն, շումերական աղբյուրներում նշվող մի քանի տեղանուններից, կարելի է եզրակացնել, որ Արատտան գտնվում էր Հայկական լեռնաշխարհում: Օրինակ՝ հերոսավեպում Արատտան հիշատակվում է որպես բարձր լեռնային երկիր: Արատտայից Շումեր գնում էին «Ուրուկի»գետով: Ուրուկ քաղաքով հոսող միակ գետը Եփրատն է, որի ավազանում միակ լեռնային շրջանը Հայկական լեռնաշխարհն է: Հետևաբար Արատտան, անկասկած,գտնվել է Հայկական լեռնաշխարհում: Այդ են վկայում նաև Շումերից Արատտա ճանապարհին հիշատակվող տեղանունները: Դրանցից է, օրինակ, Զամուա երկիրը: Վերջինս Ուրմիո լճի հարավում էր (ասորեստանյան աղբյուրներում Ուրմիո լիճը կոչվում է «Զամուա երկրի ծով»), հետևաբար շարունակելով Շումեր-Զամուա գիծը՝ անխուսափելիորեն դուրս կգանք Հայկական լեռնաշխարհ:

Արատտայի մասին ամենաամբողջական պահպանված բնագիրը

- Ըստ շումերական աղբյուրների Արատտան եղել է աստվածապետական (կրոնապետական կամ թեոկրատական) կարգերով երկիր: Երկրի ճակատագրին վերաբերող կարևոր հարցերի լուծման համար քրմապետ-արքան գումարում էր ավագների ժողով: Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «կառավարիչ»: Արատտայում հիշատակվում են նաև տնտեսական ոլորտի պաշտոնյաներ՝ հարկահաններ, վերակացուներ, ինչը խոսում է երկրում արդեն որոշակի զարգացում ստացած պետական համակարգի մասին: Մեզ են հասել տեղեկություններ նաև Արատտայի և Շումերի տնտեսական հարաբերությունների մասին: Արատտացիները հացահատիկ և այլ երկրագործական ապրանքներ են ներմուծել և փոխարենը արտահանել մետաղներ ու թանկարժեք քարեր: Բացի դրանից, հարավ են ուղարկել նաև շինարարական հումք՝«լեռնային քարեր»: Շումերում որպես քաշող ուժ և փոխադրամիջոց օգտագործվել են ավանակները, Արատտայում՝ ձիերը: Ձիերի կիրառումը տնտեսության մեջ և ռազմարվեստում բերեց աննախադեպ առաջընթացի: Շումերական բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին: Դրանցից մեկի համաձայն՝ շումերական բանակը պաշարում է Արատտայի համանուն մայրաքաղաքը, սակայն մեկ տարի պաշարելով՝ չի կարողանում գրավել. «Քաղաքից տեղում էին նետեր, ինչպես անձրևն ամպերից, պարսատիկների քարերն անձրևի կաթիլների պես Արատտայի պարիսպներից թափվում էին ամբողջ տարին աղմկոտ սուլոցով: Օրերն անցնում էին, ամիսները՝ երկարում, տարին բոլորեց մի ամբողջ շրջան» ...Արատտայի մասին կարևորագույն տեղեկություններից մեկն Արատտայում սեփական գրի գործածության փաստն է, ինչն ապացուցվում է նաև Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված Մ.թ.ա. III-II . III հազարամյակի մեհենագիր հուշարձաններով, որոնք դեռևս վերծանված չեն:Մ. թ. ա. III-II XXVIII-XXVII դարերում Արատտայից Շումեր էին գնում ճարտարապետներ այնտեղ մեծ շինություններ կառուցելու նպատակով: Մ.թ. ա. III-II XXVI-XXVդարերով թվագրվող բնագրերում Միջագետքում բնակություն հաստատած սուբարեցիները հիշատակվում են որպես դպիրներ, դպրապետեր, հացթուխներ, հացթուխապետեր, դարբիններ, այգեպաններ և այլն: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Արատտայի հիշատակության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը միավորված էր մեկ մշակութային գոտում, որը հնագիտական գրականության մեջ ընդունված է կոչել Հայաստանի վաղ բրոնզիդարյան մշակույթ:

Սիսասնի

Խեթական թագավորության հզորության ժամանակավոր թուլացման շրջանում Առաջավոր Ասիայում սկսում է գլխավոր դեր խաղալ **Միտաննի** հուրրիական թագավորությունը : Այս պետության մասին ավելի քիչ բան գիտենք, քան խեթական թագավորության մասին:Մի շարք մանր քաղաք-պետությունների նվաճման և միավորման հետևանքով մ.թ.ա.16-րդ դարում Արևմտյան Խաբուր գետի վերին հոսանքի շրջանում, Հյուսիսային Միջագետքում ստեղծվեց Միտաննի թագավորությունը՝ Վաշշուգանե մայրաքաղաքով: Թեև նրա թագավորները, հավանաբար, հնդիրանական անուններ էլ էին կրում, բայց կենցաղում օգտագործում էին Հուրիերենը, իսկ պաշտոնական շրջաններում՝ նաև աքքադերենը և սեպագրի աքքադական սիստեմը: Հավանաբար «Հուրի» և «Միտաննի» տերմինները խեթերն օգտագործել են որպես նույնանիշներ:

Միտաննի հուրիական պետության կազմավորում, հուրիական «Միտաննի» պետության հայտ գալը Առաջավոր Ասիայում, մ.թ.ա. 16-րդ դարում: Միտաննին էլ ավելի հեղհեղուկ պետական կառուցվածք ուներ, քան խեթական թագավորությունները. նրա կազմի մեջ մտել էին շատ կիսանկախ շրջաններ և մանր թագավորություններ, որոնք պարտավոր էին տուրք վճարել և ռազմիկներ տրամադրել միտաննական թագավորներին: Նրա ազդեցությունը տարածվել է՝ արևելքում ներկայիս Քիրքուքիցմինչև Օրոնտես գետի հովիտը Ասորիքում, Միջերկրական ծովեզերքը և ԿիլիկիանՏավրոսի լեռները, ուր գտնվում էր Կիզզվատնա թագավորությունը: Հուրիների պետական կառուցավածքը, ինչպես խեթական թագավորության մեջ, այստեղ ևս առանձին խոշոր շրջանները կառավարվում էին արքայազունների կողմից և Միտաննի թագավորությանը ենթարկվում էին մի շարք ինքնավար թագավորություններ: Այսպես, օրինակ, Աշուրում, որը լիովին պահպանել էր իր ներքին կառուցվածքը և կառավարվում էր ավագների խորհրդի և կառավարչի կողմից, կար նաև միտանտական «դեսպան» , որը մասնակցում էր քաղաքի կառավարմանը: Միտաննիում տեղական կառավարիչները, իսկ որտեղ դրանք չկային՝ ավագների խորհուրդը, հավանաբար, բավական անկախ էին:

Միտաննիի արքայացանկ

- Կիրտա մ.թ.ա. 1550-1525
- Շուտարնա I մ.թ.ա. 1525-1500
- Պարատտարնա մ.թ.ա. 1500-1470
- Սաուսադատտար մ.թ.ա. 1470-1430
- Արտադամա I մ.թ.ա. 1430-1400
- Շուտարնա II մ.թ.ա. 1400-1375
- Արտասշումարա
- Տուշրատտա մ.թ.ա. 1375-1350
- Արտադամա II մ.թ.ա. 1360-1340
- Շուտարնա III մ.թ.ա. 1340-1320
- Շատտիվազա մ.թ.ա. 1320-1300
- Շատուարա I մ.թ.ա. 1300-1285
- Վասաշատա մ.թ.ա. 1285-1275
- Շատուարա II մ.թ.ա. 1275-1260

Rwjwuw

Հայասա կամ *Հայասա-Ազզի*, պետական կազմավորում Հայկական լեռնաշխարհի տարածքում, հիշատակվում է խեթական արձանագրություններում մ.թ.ա. 16-րդ դարից առ մ.թ.ա 13-րդ դար: Գտնվել է Սև ծովի, Եփրատ գետի, Հայկական Տավրոս լեռների և Վանա լճի միջև: Հայասայի կարևոր կենտրոններից էր Կումախան՝ հետագա Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Անի-Կամախը, որտեղ էր հայոց թագավորների դամբարանը: Մ.թ.ա. 15-րդ դարի վերջին և մ.թ.ա. 14-րդ դարի սկզբին Հայասա թագավորությունը կարճ ժամանակահատվածում տարածաշրջանում զբաղեցնում է առաջնային դիրքեր: Հայասան վերջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. 13-րդ դարի վերջին:Ուսումնասիրողները գտնում են, որ *Հայասա* անունը կազմված է «հայ» արմատից, «սա» խեթական վերջածանցից և նշանակում է հայերի երկիր, Հայաստան:

Հայասայի կարևոր քաղաքներն էին Արխիտան, Ուրան, Արիպսան, Դուկկաման , Կումմախան կամ Կամուխան , Հայասան և Ազզին ևն:

Նախյան երկներ

Նաիրի, երկիր Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 14 - 10-րդ դարերում, Վանա լճի մերձակա տարածքները բնակեցնող հուրի-հայկական ցեղերի ասորերեն անվանումը, որը նշանակում է «գետեր» : Մ.թ.ա. 14 - 13-րդ դարերում Վանա լճի շրջակայքում և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածությունների վրա ապրում էին հուրիա-հայկական բազմաթիվ ցեղեր, որոնց զբաղեցրած տարածքը ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է *Նաիրի երկիր*:
Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան շրջաններում առաջին ցեղային միությունները հիշատակվում են սեպագրերում միայն մ.թ.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կեսից: Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները՝ Վանա լճի և Եփրատի հովտի միջև, զբաղեցնում էր Նաիրի ցեղային միությունը, որի մեջ մտնում էին մի քանի տասնյակ ցեղեր: Նաիրյան ցեղային միության ուժեղացմանն էապես նպաստեցին ասորեստանյան թագավորների ավերիչ ու ավարառուական արշավանքները: Դրանց դիմադրելու համար նաիրյան ցեղերը թշնամու դեմ դուրս էին բերում պատկառելի միացյալ ուժեր՝ միավորելով մի քանի տասնյակ ցեղերի զինուժը: Նաիրյան միության բնակչության գերակշիռ մասը կազմում էին հայալեզու ցեղերը:

Արարատյան թագավորություն

Վանի թագավորություն, պետություն Հայկական լեռնաշխարհում՝ մ.թ.ա. 9-6-րդ դարերում: Թագավորության արքաների թողած արձանագրություններում երկիրը կոչվում է «**Բիայնիլի**», երբեմն՝ «**Նաիրի**», ասորեստանյան աղբյուրներում այն հիշատակվում է որպես «**Ուրարտու**» իսկ Աստվածաշնչում՝ «**Արարատյան թագավորություն**» անուններով: Թագավորության հիմնադիր արքա է հիշատակվում Արամեն, որը կառավարել է մ. թ. ա 860-840 թվականներին: Նրա մասին տեղեկութոյուններ է պահպանվել Ասորեստանի Սալմանասար Գ թագավորի (մ.թ.ա. 859-824) արձանագրություններում: Արամեին հաջորդել է Սարդուրի Ա-ն, որը մ. թ. ա. 830-ական հզորացրել է երկիրը և Վանա լճի ափին հիմնել Վան (Տուշպա, Տոսպ) մայրաքաղաքը, որի անունից էլ առաջացել է թագավորության անունը՝ Վանի թագավորություն: Սարդուրի Ա-ին հաջորդում է Իշպուինին, որը իր որդի Մենուայի հետ իրականացնում է մի շարք բարեփոխումներ և շարունակում հզորացնել երկիրը: Վանի թագավորությունը իր հզորության գագաթնակետին է հասել Արգիշտի Ա-ի գահակալման ժամանակաշրջանում (մ.թ.ա. 786-764): Նա կազմակերպել է մի շարք արշավանքներ դեպի Ասորեստան և այլ երկներ: Նա շրջափակման մեջ է գցել Ասորեստանը, որի հետևանքով հակառակորդի զորավարները սարսափում էին նրանից և ասում, որ «նրա անունը հնչում է ինչպես ծանր հողմ»: Արգիշտի Ա-ից հետո գահը անցնում է նրա որդի Սարդուրի Բ-ին, որը նույնպես շարունակում է տարածքային նվաճումները: Սարդուրի Բ-ից հետո երկրում սկսում է անկման ժամանակաշրջան, որի ժամանակ գահակալում են Ռուսա Ա-ն, Արգիշտի Բ-ն, Ռուսա Բ-ն, Սարդուրի Գ-ն, Սարդուրի Դ-ն, Էրիմենան, Ռուսա Գ-ն և Ռուսա Դ-ն: Թագավորությունը վերջնական անկում է ապրում մ. թ. ա 590 թվականին: